

եայ ամիրանները, զարպանէցիները, հացապետները, քիւրքճիպաչիներն և ա՛յլ պաշտօնները:

Սակայն այս ամէնուն մէջ՝ բաց ի նախորդով յիշուած քանի մը վաճառապետներէն՝ մեծ վաճառականութեան գլխաւոր ներկայացուցիչներ՝ թուի՝ չեն երեւցած մինչև 1830-40, կամ անուննին չէ՛ հասած մեզի: Բաղէշի, Կարսի, Մելղենիի և Կոմանայի շահաստաններուն մեծ վաճառականները՝ թուի իրենց ընավայրին վրայ շարունակած են իրենց գործառնութիւնները, անփոյթ հեռաւոր գաղթականութեանց խայծերուն:

1820էն 1835՝ մինչ Կ. Պոլիսի հին սեղանաւոր մեծ Ակընցիները տեղի կուտային հետզհետէ գործի ու աշխարհի՛ ալ թատրէն, Կ. Պոլիսի բանիմաց Հայերը կը կեդրոնանային գլխաւորապէս՝ Տիւղեանց պաշտպանութեամբ՝ Զարպանէյի գործառնութեանց վրայ, և յոյն վաճառականներն ու արեւելցի քրտնիկները, որ ցայնվայր արմտեաց ու մանիֆաթուրայի առեւտուրները կը կատարէին, կամփոփուէին սեղանաւորական շահագէտ ու հաշուադէտ գործունէութեանց պարունակին մէջ, ուր դժուար էր մուտ գործել օտար լեզուներու անընդեկ ու միայն թուրքերէնի և մասամբ իտալերէնի վարժ Հայերուն: Եւ ահա ծայր կուտար սեղանաւորական և կառուցապետական երկրորդ ու վերջին հին դասակարգ մը՝ ամիրայութեան վերջալոյսին մօտերը: Դաղէզ Յարութիւն, որդի Կարսցի պէզճի մը, զաղէզներու համեստ շուկայէն կը բարձրանար Փողերանոցի վարչութեան ու խորհրդակաշնութեան, որով՝ ինչպէս նաև բացառիկ յարազաներու և շնորհներու բերումով՝ Կ. Պոլիսի գործօն Հայերուն առջեւ կը բացուէր ոսկեդար մըն ալ լայն գործերու և թեւարկեալ հարստութեանց, մանաւանդ Սուլթան Մահմուտ երջանկայիշատակ Կայսրին առատագթութեամբ: